№ 144 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 1888 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 № 144

ՏԱՍՆ ԵՒ Վ ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

Въ 1889 году газета «Кавказъ» будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ, ежедневно, не исключая и понедѣльниковъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

СЪ ПЕРЕСЫЛКОЮ:

Съ доставкою въ Тифлисѣ.	По Имперіи.	По почтовому союзу.
На годъ . . . . 11 р. 50 к.	На годъ . . . . 13 р. — к.	На годъ . . . . . 18 р. 40 к.
» 1/2 года . . 6 » — »	» 1/2 года . . 7 » — »	» 1/2 года . . 10 » — »
» 3 мѣсяца. 3 » 50 »	» 3 мѣсяца. 4 » — »	» 3 мѣсяца . 6 » — »
» 1 мѣсяцъ. 1 » 50 »	» 1 мѣсяцъ. 1 » 75 »	» 1 мѣсяцъ . 2 » — »

Подписка принимается исключительно въ конторѣ редакціи, Тифлисъ, уголъ Головинскаго проспекта и Барятинской улицы, домъ Ротинова.

Для иногородних адресовать: Тифлисъ. въ редакцію газеты «Кавказъ».

ОТЪ КОНТОРЫ.

Объявленія изъ Москвы, С.-Петербурга, Царства Польскаго и заграницы, кромѣ Франціи, принимаются исключительно въ центральной конторѣ объявленій, бывшей Л. Метцль, въ Москвѣ, Мясницкая, домъ Спиридонова. 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Կոմս Միքայէլ Լօրիս-Մէլիքովի· Կովկասեան գիւղատնտեսական-արդիւնաբերական ցուցահանդէս· Զուրն ընկած ընկերութիւնը· Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից· Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ· — ՑԱՑՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Ակնարկներ·

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ՄԻՔԱՅԷԼ ԼՕՐԻՍ-ՄԷԼԻՔՕՎ

—

Անցեալ անգամ հաղորդեցինք մի քանի ընդհանուր տեղեկութիւններ կոմս Միքայէլ Լօրիս-Մէլիքովի մասին, որը վախճանվել է Նիցցայում (Ֆրանսիա) դեկտեմբերի 13-ին։ Այս անգամ աւելորդ չենք համարում հաղորդել մի քանի կենսագրական մանրամասնութիւններ հանգուցեալի մասին։

Միքայէլ Լօրիս-Մէլիքով ծնվել է 1825 թ-ին, հայ ծնողներից։ Ծնողները կամենալով որ իրանց որդին զինուորական ծառայութեան մէջ մտնի, նրան տուեցին զինուորական դպրոց, որտեղ նա իր ուսումը աւարտեց 1843 թ-ին, և մի քանի տարուց յետոյ սկսեց ծառայել Կովկասում, մասնակցելով նոյն իսկ զանազան կռիւներում, զբաղխաւորապէս Կովկասեան լեռնականների դէմ։ 1849 թ-ին Լօրիս-Մէլիքով համարեա միանգամից յայտնի եղաւ՝ նշանաւոր Շամիլի հետ ունեցած ընդհարումների մէջ։ 1853 թ-ականից սկսած հանգուցեալը յայտնվեց և Թիւրքաց զօրքի դէմ ունեցած յաղթութիւններով, այնպէս որ Լօրիս-Մէլիքովի անունը արդէն սկսեց հռչակվել ոչ միայն զինուորական շրջաններում, այլ նոյն իսկ ժողովրդի մէջ։ 1856 թ-ականին, 31 տարեկան հասակում նա ստացաւ գեներալ-մայորի աստիճանը։ 1858 թ-ականից Լօրիս-Մէլիքով իր պատերազմական գործունէութիւնը փոխարինեց խաղաղ գործունէութեամբ՝ Կովկասեան փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի մօտ։ 1863 թ-ին նա ստացաւ գեներալ-լեյտենանտի, իսկ 1865-ին գեներալ-ադիւտանտի աստիճանը։

1877 թ-ից Լօրիս-Մէլիքովի համար բացվեց պատերազմական գործունէութեան մի լայն շրջան, երբ սկսվեց վերջին ռուս-թրքական պատերազմը։ Այդ պատերազմում նրա կատարած քաջագործութիւնների պատմութիւնը անկասկած դեռ շատ թարմ է ժողովրդի յիշողութեան մէջ. Արդահանի վերցնելը և Ալաջա լեռների մօտ՝ Մուխթար-փաշայի դէմ ունեցած նշանաւոր յաղթութիւնը արժանացրին Լօրիս-Մէլիքովին Բարձրագոյն պարգևների և շքանշանների։ Իսկ Կարս քաղաքը վերցնելու համար նա ստացաւ կոմսի տիտղոս։

Վերջին պատերազմից յետոյ Լօրիս-Մէլիքով իրան նուիրեց բացառապէս կառավարչական խաղաղ գործունէութեան։ 1879 թ-ին նա նշանակվեց Ատրախանի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ, երբ նա կատարեալ լիազօրութիւն ստացաւ այդ նահանգում երևեցած «ժանտախտը» ոչնչացնելու համար,—որի մէջ և կոմսը մեծ ընդունակութիւն ցոյց տուեց։ Ապա Լօրիս-Մէլիքով ստանձնեց Խարկովի գեներալ-նահանգապետի պաշտօնը։

1880 թ-ականին, հանգուցեալ կայսրի ցանկութեամբ հիմնվեց «Ծայրագոյն կարգադրիչ յանձնաժողովը», որի նախագահի բարձր պաշտօնը յանձն առաւ Լօրիս-Մէլիքով։ Երբ փակվեց այդ «Ծայրագոյն յանձնաժողովը» կոմսը նշանակվեց ներքին գործերի մինիստր, ստանալով Թագաւոր-Կայսրից «Անդրէյ Պէրվոզվանների» ամենաբարձր պետական շքանշանը՝ գովասանական հրովարտակի հետ միասին։ Ներքին գործերի մինիստրի պաշտօնում նա մնաց մինչև 1881 թ-ականի մայիս ամիսը։

Վերջին տարիները կոմս Լօրիս-Մէլիքով ապրում էր արտասահմանում, գլխաւորապէս Նիցցայում, ուր և վախճանվեց։

Լօրիս-Մէլիքովի գործունէութիւնը 80-ական թ-ականներում շատ աչքի ընկնող էր ամբողջ Ռուսաստանում,—մենք կանգ չենք առնի այդ գործունէութեան վրա. դա ապագայի գործ է։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

—

1889 թ-ի սեպտեմբերին Թիֆլիսում պիտի բացվի Կովկասեան գիւղատնտեսական-արդիւնաբերական ցուցահանդէս։

Այդ ցուցահանդէսի նախաձեռնութիւնը պատկանում է Գիւղատնտեսական ընկերութեան։

Այս օրերս այդ ընկերութեան նախագահ՝ իշխան Դոնդուկով-Կորսակովի կողմից հրատարակված է մի շրջաբերական, ուղղած Կովկասի նահանգապետներին, որով իշխանը տեղեկութիւն տալով ցուցահանդէսի կազմակերպութեան մասին, յորդոր է կարդում նրանց՝ նպաստել այդ գործին։

Ցուցահանդէսը պէտք է ունենայ հետևեալ բաժինները. 1) Դաշտային, 2) Այգեգործական, և ագարակագործական, 3) Գինեգործութիւն, 4) Շերամապահութիւն և մետաքսագործութիւն, 5) Մեխանոտագործութիւն, 6) Բամբակագործութիւն, 7) Բուսական ձէթ և ներկեր, 8) Անտառային, 9) Զկնորսութիւն, 10) Անասնապահութեան մթերքները և կաթնատնտեսութիւն, 11) Ցնայնագործութիւն, և 12) Հողը մշակելու գործիքներ։

Հաղորդելով այդ տեղեկութիւնները, իշխան կառավարչապետը, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան կողմից, առաջարկում է նահանգապետներին հետևեալը. ա) ամեն միջոց ձեռք առնել տարածելու ցուցահանդէսի մասին ճիշդ տեղեկութիւններ ազգաբնակութեան մէջ, և դրաւելու, որքան կարելի է, շատ թիով ներկայացուցիչներ։ բ) Այդ նպատակի համար նահանգապետներին առաջարկվում է կազմել իրանց անմիջական ղեկավարութեան ներքոյ ժամանակաւոր մասնաժողովներ՝ տեղական վարչութեան պատկանող անձինքներից և հմուտ երկրագործներից, որպէս զի մասնաժողովները որոշեն և ձեռք առնեն միջոցներ՝ ցուցահանդէսի կանոնները իրագործելու համար. և գ) հասկացնել զեմստվոների ոստիկանութիւններին, որ նրանք իրանց կողմից աջակցեն տեղական ազգաբնակութեանը՝ առարկաները ցուցահանդէս ուղարկելու համար և այդ առարկաները պահեն ամբողջ և անվնաս։

Ցուցահանդէսին վերաբերեալ հաղորդակցութիւնները պէտք է անել Կովկասեան Գիւղատնտեսական ցուցահանդէսի հետ։

Ընկերութեան նախագահ իշխան Դոնդուկով-Կորսակով նահանգապետներին ուղղած մի առանձին գրութեան մէջ՝ ակնարկելով ցուցահանդէսի մեծ նշանակութեան վրա՝ և հրաւիրելով ադմինիստրացիային ջերմ մասնակցութիւն ընդունել այդ գործում, այն միտքն էլ է յայտնում, որ կառավարչական դպրոցների վարժապետները և գործիչները կարող են լինել մի տեսակ գործակալներ ցուցահանդէսի համար. այդ դպրոցական գործողները՝ ունենալով մշտական յարաբերութիւն ժողովրդի հետ, կարող են, եթէ ցանկացան գրականութեամբ ապրել, և մեռնելով ու ազգին գաղափարներ ու գրուածքներ թողնելով նրանք իրանց ժառանգներին թողեցին մի փառաւոր ոչինչ։

Ես մատնանիշ կանեմ մեր գրականութեան աւելի նոր մշակների վրա, և ինքն հասարակութիւնը կարող է տեսնել, որ չքաւորութիւնը մինչև այժմ էլ հայ գրողի անբաժան ընկերն է.... Ներենց՝ «Երկունքի» և «Թորոս Լեռնիի» հեղինակը, բժշկութեամբ պարապելով էր հայթայթում իր ապրուստը. Թիւրքահայերի գրողները, առանց բացառութեան, սկսած Պէշիքթաշլեանից և Դուրեանից մինչև այժմեան գրողները, յետին չքաւորութեան մէջ են եղել. Կ. Պոլսում, որքան ինձ յայտնի է, մինչև այժմ էլ գրականութեամբ ապրելու յոյսը մի ցնորք է համարվում, և այդ պատճառով այնտեղի գրողները, ամենամեծից սկսած մինչև ամենավերջինները, պարապում են կամ վաճառականութեամբ, և կամ որ և է մասնաւոր կամ կառավարչական ծառայութեամբ.... Ինձ թւում է, որ մինչև անգամ, եթէ Պոլսի մամուլը և դրա գրողները այնքան չողոքորթ են և իրանց գրիչը ծառայեցնում են սրա նրա համար ներբողներ գրելու, դրա գլխաւոր պատճառը այն դրամական ողորմելի և անպաշտպան վիճակն է, որի մէջ գտնվում են այդ գրողները, այդ գրչաւորները....

—

Սակայն ինչու ենք Պոլիս գնում, նայենք մեր ռուսահայերիս գրական մշակների վրա, որոնց մի փոքր էլ կարմրի ինքն ժողովուրդը, որ այսօր տեսնում է թէ իր համակրանքը դէպի յարգելի գրողը եղել է մեծ մասամբ փքուն խօսքերով, և կամ, ինչպէս ինքն ժողովուրդն է ասում, Նիսիա....

—

Բայց զարմանալին այն է, որ Րաֆֆիի այդ աննախանձելի դրութիւնը նախանձելի է եղել մեր գրականութեան շատ մշակների համար։ Րաֆֆին դեռ իր կենդանութեան ժամանակ առաջին հայ գրողն էր, որ ուզում էր ապացուցանել, թէ հայոց գրականութիւնը այն աստիճանի զարգացման է հասել, որ նրա մշակը կարող է ապրել գրական վաստակով, և առանց ուրիշ պարապմունքներով էլ զբաղվելու, կարող է անկախ կերպով ապրել իր գրչի աշխատանքով։

Մօտ 10 տարի անմիջապէս աշխատելով «Մշակի» խմբագրատանը, Րաֆֆին դրամական կողմից այնքան ապահով դրութեան մէջ էր զգում իրան, որ կարողացաւ թողնել թէ վարժապետութիւնը թէ ուրիշ պարապմունքներ, մինչդեռ հայ գրականութեան միւս մշակները համարեա ամբողջապէս ստիպված էին տարիների ընթացքում ուրիշ գործերով զբաղվել՝ իրանց ապրուստը հայթայթելու համար....

Ես չեմ խօսում անցած գնացած հին տարիների մասին. ես չեմ խօսում այն բանի վրա, որ մեր հին գրողները՝ Աբովեան, Նաղաշեան, Նալբանդեան և դրանց ժամանակակիցները չը կարողացան գրականութեամբ ապրել, և մեռնելով ու ազգին գաղափարներ ու գրուածքներ թողնելով նրանք իրանց ժառանգներին թողեցին մի փառաւոր ոչինչ։

Ես մատնանիշ կանեմ մեր գրականութեան աւելի նոր մշակների վրա, և ինքն հասարակութիւնը կարող է տեսնել, որ չքաւորութիւնը մինչև այժմ էլ հայ գրողի անբաժան ընկերն է.... Ներենց՝ «Երկունքի» և «Թորոս Լեռնիի» հեղինակը, բժշկութեամբ պարապելով էր հայթայթում իր ապրուստը. Թիւրքահայերի գրողները, առանց բացառութեան, սկսած Պէշիքթաշլեանից և Դուրեանից մինչև այժմեան գրողները, յետին չքաւորութեան մէջ են եղել. Կ. Պոլսում, որքան ինձ յայտնի է, մինչև այժմ էլ գրականութեամբ ապրելու յոյսը մի ցնորք է համարվում, և այդ պատճառով այնտեղի գրողները, ամենամեծից սկսած մինչև ամենավերջինները, պարապում են կամ վաճառականութեամբ, և կամ որ և է մասնաւոր կամ կառավարչական ծառայութեամբ.... Ինձ թւում է, որ մինչև անգամ, եթէ Պոլսի մամուլը և դրա գրողները այնքան չողոքորթ են և իրանց գրիչը ծառայեցնում են սրա նրա համար ներբողներ գրելու, դրա գլխաւոր պատճառը այն դրամական ողորմելի և անպաշտպան վիճակն է, որի մէջ գտնվում են այդ գրողները, այդ գրչաւորները....

—

Սակայն ինչու ենք Պոլիս գնում, նայենք մեր ռուսահայերիս գրական մշակների վրա, որոնց վաղուց արդէն զբաղեցնում է գրական վաստակով ապրելու բաղձանքը։ Վերցրէք մեր ժամանակակից գրողներից որին և կամենաք,—նրանք բոլորն էլ չքաւոր մարդիկ են։ Ես չեմ էլ խօսում նոր գրողների մասին, որոնք, ինչպէս երևում է, դեռ շատ և շատ դառն ժամեր պէտք է ճաշակեն, վերցրէք նոյն իսկ այն մարդկանց, որոնք գրում են ոչ թէ հինգ կամ տասն տարուց ի վեր, այլ որոնց գրական գործունէութեան 25-ամեակն էլ, 30-ամեակն էլ, եթէ կամենում էք, 35-ամեակն էլ վաղուց անցել է.... Թամ ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Գամառ-Քաթիպան, որի 35-ամեակը վաղուց անցել է, ստիպված է դպրոցական գործերով զբաղվել, և այդ դպրոցական ասպարէզի վրա, Նոր-Նախիջևանում հազար ու մի ինտրիգաների և ստոր նենգութիւնների հետ կռուել, որպէս զի ապրուստ հայթայթէ, որովհետև ժամանակակից հայոց ամենաժողովրդական բանաստեղծի քնարը, որ այդքան տարիներ ի վեր հնչում է, անկարող է այդ ապրուստը հայթայթել....

Վերցրէք միւսներին։ «Հացի խնդրի» և «Կրուածաղիկի» հեղինակը, որի գրական գործունէութեան 25-ամեակը տօնելու մասին անգամ խօսք եղաւ, այդ անիծեալ «հացի խնդրի» համար տարիների ընթացքում թողնելով գրիչը՝ պարապել է զանազան գործերով, և այժմ էլ ուսուցչութեամբ, որը, ինչպէս ասում են, բոլորովին նրա ֆիզիկական ոյժերին և առողջութեանը յարմար պարապմունք չէ և քայքայում է նրա թոյլ ոյժերը։ Մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

Րաֆֆի.—Գրական աշխատանք.—Գրականական մշակների անապահով վիճակը.—Ներենց և Կ. Պոլսի գրողները.—Չի՛, և նոր գրողների դրութիւնը.—Մանկավարժական և այլ ասպարէզների վրա գործողները.—Գրական աշխատանքի վարձատրութեան հարցը.—Մեր մամուլը և գրողներին վարձատրելու խնդիրը.—Հասարակութեան պարտքը.

—

Տխուր տպաւորութիւն թողեց ինձ վրա, անկասկած և ամենքի վրա, «Մշակի» № 141-ի մէջ տպված պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանի նամակը, որը վերաբերում է հանգուցեալ Րաֆֆիի դրամական գործերին։

Այժմ պարզ է ուրեմն, որ ժամանակակից ամենաժողովրդական և ամենաբեղմնաւոր գրողը, որպիսին էր Րաֆֆին, բացի իր գրուածքներից, բացի իր մտքի և գրչի արտադրութիւններից—ուրիշ մի առանձին բան չէ թողել.... Խոստովանում եմ անկեղծօրէն այդ փաստը անհաճելի է ոչ թէ միայն հանգուցեալ Րաֆֆիի ընտանիքի համար, այլ և հայ ժողովրդի համար, որի պատասխանատուութեանը մի ուղղակի վիրաւորանք է դա։

Եւ միթէ չը պէտք է վիրաւորվի, չը պէտք է

նան, բացատրել ցուցահանդիսի նշանակութիւնը, և միջնորդ լինել ժողովրդի և ցուցահանդիսի կենտրոնական վարչութեան մէջ: Բացի ձեռակնութիւններից, ասված է այդ գրքոյկի մէջ, անհրաժեշտ է համոզել ժողովրդին, որ ցուցահանդէսը կազմվում է հէնց նրա օգտի համար, և շատ ցանկալի է, որ ժողովրդի շատ ներկայացուցիչներ, և մանաւանդ տնայնագործներ, ներկայ լինեն ցուցահանդիսին՝ իրանց առարկաներով և իրերով: Իշխան Դոնդուկով-Կորսակովի այդ գրքոյկը վերջանում է նրանով, թէ ցանկալի է, որ մանաւանդ թուրք ազդաբնակութիւնը համակրութեամբ վերաբերվի դէպի այդ գործը, և այդ նպատակով առաջարկվում է դիմել մահմեդական հոգևորականութեան, և առհասարակ այն անձինքների միջնորդութեանը, որոնք միշտ յարաբերութիւն ունեն ժողովրդի հետ:

Ինչ կասված, որ ցուցահանդիսի աջողութեան վրա մեծ ազդեցութիւն կարող են ունենալ՝ ժողովրդի մօտ կանգնած երիտասարդութիւնը, վարժապետները, հասկացող պաշտօնեաները և հոգևորականութիւնը,—եթէ դրանք ամենքն էլ՝ կը սկսեն իրանց կողմից պրօպագանդա անել ցուցահանդիսին մասնակցելու և այդ մասնակցութեան օգտակարութեան մասին:

ԶՈՒՐՆ ԸՆԿԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1880 թուականին Թիֆլիսում հիմնվեց մի ընկերութիւն, մի շատ համակրելի և օգտաւէտ նպատակ ունեցող ընկերութիւն, այն է «Ցպագրական ընկերութիւնը»: Այն օրից անցել է ամբողջ 8 տարի,—և մենք այսօր նայելով այդ ընկերութեան պատմութեան վրա, քննելով նրա գործերը, և ուշադրութեան առնելով առանձնապէս այն մեռելութիւնը, որի մէջ ընկել է այդ հիմնարկութիւնը վերջին մի քանի տարիների ընթացքում, ակամայ կերպով տոիսված ենք բացականչել. «միթէ ճշմարիտ այնքան էլ խայտառակ անգործութեան մէջ կարող է ընկնել մի ժամանակակից հիմնարկութիւն, ինչպիսին է «Ցպագրական ընկերութիւնը»:

Ի՞նչ է արել այդ երկար տարիների ընթացքում ընկերութիւնը: Համարեա թէ ոչինչ:

Բայց թող փաստերը խօսեն: Ընկերութիւնը մինչև այժմ, 8 տարվայ ընթացքում, հրատարակել է, երևակայեցէք, ընդամենը 23 գիրք: № 1—6 գրքերը հրատարակված են 80-ական թուականներին իսկապէս մի խումբ երիտասարդների ձեռքով, և երբ ընկերութիւնը հաստատվեց, այդ գրքերն էլ մտան ընկերութեան ցուցակի մէջ, բացի դրանից երեք գիրք էլ նուիրված են պ. Եղեանի և բժ. Բաբայեանի կողմից ընկերութեանը: Արդ հետաքրքրական է իմանալ, արդեօք ընկերութիւնը հրատարակելով այդ փոքրաթիւ գրքերը, ի նկատի է ունեցել ժողովրդի պահանջները, արդեօք ցանկացել է տալ ժողովրդին մատչելի և նպատակայարմար գրքեր, թէ տպագրել է այն, ինչ իր ձեռքն է ընկել:

Ի նկատի ունենալով ընկերութեան այդ ողորմելի գործունէութիւնը, հաստատապէս կարելի է ասել, որ հրատարակած գրքերի մեծ մասը չը պէտք է տպագրվէին ընկերութեան հաշուով, եթէ խմբագրական-վարչական ժողովները հասկացող լինէին իրանց գործի մէջ: Ընկերութիւնը հրատարակել է այնպիսի գրքեր, ինչպէս են՝ Խորենացի, Ագաթանգեղոս, Ասողիկ, Ղևոնդ պատմագիր, և նոյն իսկ Մօրիս-Բլոկի, այլ և Հաուֆի ու Շմիդտի թարգմանական գրուածները, որոնց փոխարէն ընկերութիւնը կարող էր տպագրել ուրիշ, անհամեմատ աւելի օգտակար աշխատութիւններ, և գոնէ դրանով տպագրված գրքերը դարսած չէին մնայ ընկերութեան պահեստի մէջ, ցեցի և խոնաւութեան կերակուր դառնալու համար:

Ասենք թէ վատ միտք չէ հայոց կլասիկներ հրատարակելը, բայց միթէ յիրաւի այդքան մեծ կարօտութիւն ունի մեր ժողովուրդը այդ կլասիկների, պատմական գրուածների մէջ, մանաւանդ որ Մխիթարեանները անդադար հրատարակում են այդ գրուածները աւելի լաւ կերպով, և քանի որ նոյն ընկերութիւնը մերժել է հրատարակել այնպիսի գրողների աշխատութիւնը, ինչպիսին է Ղազարոս Աղայեան և այլն:

Զը մտածելով հրատարակելի գրքերի պիտանիութեան և բովանդակութեան մասին, չը հոգալով ընկերութեան նիւթական միջոցները մեծացնելու մասին, տպագրելով այնպիսի գրքեր, որոնք ժողովրդի մէջ չէին կարող տարածվել, այլ միայն պէտք է մնային պահեստի մէջ դարսած, և վերջապէս խախտելով ընկերութեան կանոնադրութիւնը՝ ժողովներ չանելով, հաշիւ չը տալով և ամեն բան անձնական կամայականութեան ենթարկելով, «Ցպագրական ընկերութեան» վարչութիւնը այնտեղ հասաւ, որ վերջին երկու տարվայ ընթացքում ոչ ժողով է արել, ոչ նոր պաշտօնատար անձինք է ընտրել, և ոչ էլ հաշիւ է տուել....

Ընկերութեան վերջին ընդհանուր ժողովը եղաւ 1886 թուի դեկտեմբերի 26-ին, որին ներկայ էին ընդամենը ինն անդամ միայն....

Դրանից յետոյ ոչ մի ժողով չէ եղել, թէև կանոնադրութեան զօրութեամբ ամեն տարի ընդհանուր ժողովներ պէտք է լինեն: Դրանից յետոյ, ուրեմն աւելի քան երկու տարվայ ընթացքում, ոչ հաշիւ է տրված, և ոչ էլ նոր պաշտօնատար անձինք են ընտրված, կամ ուրիշ խօսքերով՝ փառաւորապէս խախտված է ընկերութեան կանոնադրութիւնը:

Այդ տեսակ աններելի անհոգութեան, անտարբերութեան և կամայականութեան ենթարկելով մի հասարակական հիմնարկութիւն, ի հարկէ այդ հիմնարկութիւնը կարելի էր հասցնել այն ողորմելի և մոռացված դրութեան, որին նա հասել է: Եւ այդ չը տեսնված խայտառակութեան հետևանքը այն պիտի լինէր, ի հարկէ, որ մի այսպիսի բարենպատակ և պիտանի ընկերութիւն ջուրը պիտի ընկնէր և ընկաւ էլ....

Մի քանի խօսք ևս: Կանոնադրութեան զօրութեամբ՝ ընկերութեան կանոնադրութեան ճիշդ գործադրութեան վրա հսկողը պիտի լինի վարչութեան նախագահը:—Գուցէ-ինքն հասարակութիւնը չի զարմանայ այն բանի վրա, որ «Ցպագրական ընկերութիւնը» այդ ասոիճան ընկած դրութեան է հասել, եթէ յայտնենք որ վարչութեան նախագահի պաշտօնը վաղուց ի վեր կատարում է մեր հասարակութեան լաւ ծանօթ պ. Աբգար Յովհաննիսեան: Պ. Յովհաննիսեանից աւելի լաւ հասարակական գործունէութիւն սպասել,—առ նուազն, ի հարկէ միամտութիւն կը լինէր... մանաւանդ, որ փոխ-նախագահի պաշտօնն էլ վարում է պ. Գէորգ Աքիմեան, որը նոյնպէս անծանօթ չէ մեր հասարակութեանը: Հաշիւ չը տալու և ժողովրդի իրաւունք չը ճանաչելու գործում թէ պ. Յովհաննիսեան և թէ պ. Աքիմեան արդէն վաղուց վարժված են, և այդ պատճառով նրանք միանդամայն աւելորդ են համարել «Ցպագրական ընկերութեան» մասին ժողովրդին հաշիւ տալու և կանոնադրութեան ենթարկվելու գործը...

Ինչպէս արդէն «Մշակում» հաղորդված էր, յունվարի 8-ին նշանակված է ընկերութեան ընդհանուր ժողովը, և ինչպէս լսում ենք Թիֆլիսի երիտասարդութեան մի մասը ցանկանում է նպաստել ընկերութեանը իր այդ խղճուկ վիճակից հանելու գործում: Երիտասարդութիւնը այդ մասին աւելի շուտ պէտք է մտածէր: Բայց՝ ի հարկէ, աւելի լաւ է ուշ, քան երբէք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի ուսուցիչ ուղարկել է մեզ հետևեալ նկատողութիւնը տպագրելու համար. «Մշակի» 141 համարում տպված «Առաջ և այժմ» վերնագրով առաջնորդողում ի միջի այլոց՝ դուք՝ հասարակութեան ուշադրութիւնը դարձնելով մեր մտաւոր գործողների անապահով դրութեան վրա՝ առաջարկում էք միջոցներ որոնել այս դասակարգը ապահովելու, կազմելով «փոխադարձ օգնութեան և խնայողական ընկերութիւններ», ինչպէս որ կազմված են Պետերբուրգում և ուրիշ տեղերում: Ձեր զարթեցրած այս ժամանակակից հարցը անչափ համակրութեամբ կարդացվեց թէ հասարակութեան և թէ առաւելապէս շատ ուսուցիչների կողմից: Բայց այսպիսի դէպքում միայն պլատոնական համակրանքը մի մեծ բան չէ, եթէ սրան կից չէ գործադրելու կամքը: Ուստի և՝ ձեր առաջնորդող յօդուածը, ուրախութիւն պատճառելով մեզ, մի և նոյն ժամանակ և առիթ է տալիս այսպիսի հարց դնելու, թէ արդեօք այդ արդարացի առաջարկութիւնը պիտի իրագործվի, թէ ոչ: Եւ թէ արդեօք կը գտնվեն այնպիսի անհատներ, որոնք պարագլուխ կը հանդիսանան այս դէպքում մշակելու մտաւոր ասպարիզում գործողների և ապահովութեան հարցը, որը մի դժուար լուծելի հարց էլ չէ մեր կարծիքով: Մասնաւորելով մեր խօսքը մանկավարժների մասին, մենք կասենք. այս րոպէիս մենք ունենք մօտ 400 ուսուցիչ և վարժուհի, որոնցից իւրաքանչիւրը հեշտութեամբ կարող է վճարել տարեկան 5 ռուբլի, ուրեմն և ընդամենը տարեկան 2000 ռուբլի. և տեսէք թէ մի տասն տարվայ ընթացքում ինչ պատկառելի գումար կը գոյանայ, որի տոկոսով շատ թշուառ ընտանիքներ կապահովվեին անտանելի նեղութիւններից: Բայց հարկաւոր է ասել և այն, որ շատ ուսուցիչներ այդպիսի խնայողական արկղի համար տարեկան ոչ թէ 5, այլ 20—25—40 ռուբլի կարող են տալ. դրանից աւելի գուցէ կը տան և ուրիշ չրջանի անձինք, և այդպիսով ընկերութիւնը գոյութիւն ունենալ կարող է, հարկաւոր է միայն, որ նրա հաստատութեան համար հոգացվի և թոյլատրութիւն ստացվի:»

—

Քանի մի օր է արդէն, որ ԹԻՖԼԻՍՈՒՄ բաւական առատ ձիւն է գալիս, այնպէս որ ոչ թէ միայն տների կտուրները, բայց և փողոցները ծածկվել են ձիւնի սպիտակ, բաւական հաստ վերմակով:

—

Լսում ենք որ այս տարի կազմակերպվում են կովկասեան տեղացիներից երկու նոր դրուժիններ, այն է 2-որդ և 4-որդ նեստաձիգ դրուժիններ: Նրանց բնակութեան տեղը, ինչպէս լսում ենք, լինելու է Սղնախ և Դուշէթ, սակայն այդ տեղերում դեռ ևս պատրաստ բնակարաններ չը լինելու պատճառով, 2-որդ դրուժինան պիտի առժամանակ մնայ Սուրամում, իսկ 4-որդի երկրորդ բոտան՝ Գորում: Գորու դրուժինայից և Ամարաթի մէջ եղող դրուժինայից՝ իւրաքանչիւրից 196 մարդ պիտի տեղափոխվեն նոր կազմվող դրուժինները:

—

Մեզ գրում են ԳՕՐՈՒՑ հետևեալը: «Կովկասեան հայոց Բարեգործական Ընկերութեան» Գորու ճիւղի անդամներից մի քանիսի առաջարկութեամբ այստեղ պիտի հիմնվի գրադարան-ընթերցարան: Այդ միտքը հնարաւոր կը լինի իրագործել, երբ Գորու հայոց դպրոցների նոր կառուցվող շինութիւնը կաւարտվի:»

—

Մեզ գրում են, որ ԳՕՐՈՒՄ սաստիկ ձիւն եկաւ այս օրերս:

—

Յունվար ամսից կը սկսենք տպագրել «Մշակ»

թէ նոյնը չէ կարելի ասել և «Արութիւն և Մանուէլի» հեղինակի՝ Ղազարոս Աղայեանի մասին, որը երկար տարիներ, մի կողմ դնելով ժողովրդական գրողի «զալամը», իրան նուիրեց վարժապետութեանը, հեռանալով Թիֆլիսից և գրական չրջաններից, բայց էլի չը նայելով դրան, չը նայելով նոյն իսկ մանկավարժական գրականութեանը տուած իր աշխատութիւններին, այնու ամենայնիւ, տասնեակ տարիներ աշխատելուց յետոյ, նոյն Աղայեան ստիպված էր «հարստահարվել» զանազան «գրավաճառների» կողմից, որպէս զի, ինչպէս ինքն է ասում «Մշակի» մէջ, պարտատէրերը չը խեղդեն իրան.... Նոր և երիտասարդ գրողների դրութիւնը, որոնք համ պէտք է չը վհատվեն իրանց նախորդների օրինակից, համ էլ պէտք է կրեն իրանց վրա դրած ծանր լուծը, այդքան տարիներ աշխատողների դրութիւնը այդպէս լինելուց յետոյ հեշտ է երևակայել:

Ես չեմ խօսում մեր թատերագրողների մասին, որոնք դեռ այնքան մեծ «քաղաքացիութիւն» չեն ստացել. պ. Գաբրիել Սունդուկեան, որի 25-ամեակը տօնելու հարցը այնքան անախորժելի կերպով խափանվեց, իր գրուածքներն անգամ չէր կարող հրատարակել, եթէ իր անձնական միջոցները չը ծախսէր: Ես չեմ խօսում այն մասին, որ մի հայ լրագրի խմբագիր, օրինակ Պետրոս Սիմէօնեան, «Մեղուի» 25-ամեակի օրը զանազան ճառեր լսելուց յետոյ նոյն իսկ Էջմիածին գնալու ճանապարհածախս չէր ունենայ, եթէ Սանասարեանի 600 ռուբլի տարեկան թոշակը և Էջմիածնից ստացած սուբսիդիան չը լիներ: Վերջապէս ես չեմ խօսում դերասան-գրող Ամերիկեանի, ուսուցիչ-գրող Արարատեանի մասին, որոնց յետին ազքատութիւնը «վիպական» ձևով պէտք նկարագրել, չեմ խօսում այն դրամական ճգնաժամի մասին, որի մէջ գտնվում են այսօր հայոց դպրոցին ծառայողները՝ ամսական քսան—երեսուն ռուբլի ստացող վարժապետների և տասը—տասնհինգ ռուբլի ստացող վարժուհիների մասին, չեմ խօսում վերջապէս հայոց թատրոնի գործին նուիրվածների մասին,—որովհետև տեսարանը միատեսակ է, և մտաւոր գործունէութեան ասպարէզի վրա անապահովութեան նոյն երևոյթն է տիրապետում....

—

Եթէ այդ տխուր երևոյթի միակ զոհերը մտաւոր ասպարիզի մշակները լինէին, հարկաւոր չէր լինի մի շատ մեծ նշանակութիւն տալ դրան, և կարելի կը լիներ բացականչել. «թող զոհվեն դրանք, որովհետև մի ամբողջ ժողովրդի առաջադիմութիւնը շատ զոհեր է պահանջում»:

Բայց ցաւը նրանումն է, որ այդ տեսակ զոհերը ուղղակի կերպով խախտում են նոյն իսկ ժողովրդի առաջադիմութեան գործը, իսկ առաջադիմութեան գործը խախտելով, խախտում են և ամբողջ ժողովրդի բարօրութիւնը.... Սակայն ես ցանկութիւն չունեմ այդ տեսակ երկար դատողութիւններ անելու, և կասեմ մինչև անգամ, որ այդ տեսակ զոհեր պահանջել մեր ժամանակում և մեր հասարակութեան նման մի հասարակութեան մէջ, որը ցոյց է տալիս թէ «ինքնաճանաչութիւն» և «գիտակցութիւն» ունի, —առնուազն անարդարութիւն է....

Ես չեմ ուզում երևակայել անգամ, որ հայերիս մէջ մի որ և է առաջնակարգ գրող, դիցուք Բաֆֆի, մեռնելով թողնէր հաղարներ, ինչպէս այդ լինում է ոչ թէ միայն եւրոպական, այլ նոյն իսկ ռուս գրողների մէջ. ես չեմ ուզում ենթադրել անգամ, որ մեր մէջ մի որ և է տաղանդաւոր մտածող, կամ մի տաղանդաւոր պուբլիցիստ, մեռնելով թողնէր հարիւր հաղարներ, ինչպէս այդ պատահում է եւրոպական մամուլի փոքր ի շատէ նշանաւոր օրգանների խմբագիրների մէջ,—բայց, ճշմարիտ, միթէ մեր ժողովրդի մէջ չէ կարելի սպասել, որ մտաւոր մշակը այնքան իրան ապահով զգայ, որ կարողանայ, առանց իր ոյժը և ժամանակը ապրուստի հոգսերին տալու, զբաղվել այն մտաւոր աշխատանքով, որին ինքն ընդունակ է, և որին այնքան պէտք ունի ամբողջ ազգի զարգացման գործը..... Մը-տաւոր ասպարիզի մշակների հարստանալը չէ մեր իդէալը,—ոչ. հարստութիւնը տեղ չունի գաղափարի աշխարհում, և արծաթի աշխարհը ուրիշ տեղ է. սակայն չքաւորութիւնը, կեանքի անապահովութիւնը, և ապրուստ ունենալու հոգսը շատ անգամ այնպէս են զբաղեցնում, կլանում նոյն իսկ շատ ընդունակ մարդկանց, որ մենք ամենքս շատ անգամ տեսնում ենք, թէ այն մարդիկ, որոնք՝ ընդունակութիւն ունեն լինելու մտաւոր լաւ գործիչներ, թողնում են մտաւոր գործունէութեան ասպարէզը, սկսում են «փող աշխատել» և «ծառայել»:

Լաւ է, եթէ ամեն մի մտաւոր մշակ այնքան ամուր բնաւորութիւն ունենար և այնքան ջերմ կերպով նուիրված լինէր իր իդէալներին, որ արհամարհելով ամեն տեսակ չքաւորութիւն և ամեն տեսակ նեղութիւններ, շարունակէր ծառայել ընդհանուր գործին.... բայց ում չէ յայտնի, որ այդ տեսակ իդէալիստ, արտասովոր և ամուր բնաւորութիւններ շատ և շատ քիչ են, և մեզ ամենքիս համար սովորական է տեսնել, թէ ինչպէս «վարդադոյն երազներով» յափշտակված մի անձ՝ ստանալով կեանքի հէնց առաջին հարուածները, թողնում է «ամեն բան» և սկսում է հոգալ «ապրուստի» մասին.... Ապացոյցներ շատ կան. նայեցէք ձեր չորս կողմը և ապացոյցներ շատ կը տեսնէք. ահա ձեզ մի մարդ, որ երկար տարիներ եղել է տեսուչ դպրոցներում,—իսկ այժմ դարձել է առևտրական կամ մի գործակալ. ահա ձեզ մի ուրիշ մարդ, որ երկար տարիներ եղել է հրապարակախօս, եղել է խմբագիր,—իսկ այժմ մի մասնաւոր գործի կպած իր ընտանիքի ապրուստն է հոգում. ահա ձեզ մարդիկ, որոնք լաւ վարժապետ, գրող և աշխատողներ էին,—բայց այժմ թողեցին այդ փշոտ ասպարէզները և ուրիշ մասնաւոր գործի նուիրեցին իրանց: Հարցրէք դրանց՝ «ինչու հեռացաք» և նրանք ձեզ կը պատասխանեն՝ «որովհետև չը կամեցանք դժբաղդացնել մեր ընտանիքը և սնացնել մեր որդոց ապագան»....

Այդ խօսքերը, որ դուրս են գալիս, ի հարկէ, մեծ մասամբ թոյլ բնաւորութիւններ ունեցողների բերանից, իսկապէս շատ վիրաւորական են ժողովրդի ինքնասիրութեան համար:

կում› Ղազարոս Աղայեանցի ‹Սէրը արտաքսված› վերնագրով վէպը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ ‹Դեկտեմբերի 4-ին և 5-ին գրեթէ ամբողջ ժամանակ ձիւն էր գալիս, այնպէս որ այժմ երկիրը ծածկված է ձիւնի բաւական հաստ քողով։›

—

Մեր նկարիչ Գէորգ Բաշինջաղեան, չը կամենալով բաւականանալ մի բանաստիրականով, խոստանում է մեզ շարունակել գրել ‹Մշակում› և եկող 1889 թուի ընթացքում։

—

Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանի ‹Բժշկի ղրոյցները› վերնագրով յօդուածները կը շարունակենք տպագրել ‹Մշակում› եկող 1889 տարվայ համարներում։

—

Կոմս Լօրիս-Մէլիքովի մարմինը, ինչպէս լսել է ‹Новое Обозрѣніе› լրագիրը, Նիցցայից (Ֆրանսիա) պէտք է բերվի Թիֆլիս, այստեղ թաղվելու համար։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց այս օրերս լոյս տեսած ‹Садоводство въ Закавказскомъ краѣ› վերնագրով գիրքը՝ աշխատութիւն Ս. Զելինսկու, որը կազմում է արքունական գիւղացիների տնտեսական կեանքի ուսումնասիրութեան ‹նիւթերի› մի մասը։ Մեր երկրի ֆիզիկական և կլիմայական պայմանների վրա տեսութիւն անելով, պ. Զելինսկի խօսում է այգեգործութեան գլխաւոր նիւթերի մասին, այն է խաղողի և զանազան մրգերի մշակութեան մասին, առանձին ուշադրութիւն դարձնելով նոյնպէս և խաղողի գործածութեան, արտահանելու և տուած օգուտների մասին զանազան նահանգներում և դաւառներում։ Գիրքը պարունակում է բաւական հետաքրքիր տեղեկութիւններ մեր երկրի այգեգործութեան մասին ընդհանրապէս։

—

Դեկտեմբերի 14-ին Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ կայացաւ Կովկասեան ցուցահանդիսի կարգադրիչ մասնաժողովի նիստը։ Մասնաժողովի պատւաւոր անդամներ ընտրվեցան՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովսկի, պետական կալուածների մինիստրի ներկայացուցիչ Տիխէեվ, իշխան Գ. Շերվաշիձէ և Վ. Շատիլով։ Կարգադրիչ մասնաժողովի նախագահ նշանակված է Կուչաեվ, որը վարում է Գիւղատնտեսական ընկերութեան փոխ-նախագահի պաշտօնը։ Մասնաժողովի փոխ-նախագահ ընտրվեց Յովհաննէս Խատիսով, իսկ քարտուղար՝ Գ. Վերմիշեվ։ Ցուցահանդիսի պրոգրամի վերջնական խմբագրութիւնը յանձնվեց պ. Խատիսովին։ Այդ նոյն ժողովը ընտրեց մի յանձնաժողով, որը պէտք է պատրաստի յատակագիծ և նախահաշիւ, ցուցահանդիսի շինութեան պատրաստութիւնները տեսնելու համար։

—

Երէկ, դեկտեմբերի 16-ին, Թիֆլիսի հայոց Վանքի մայր-եկեղեցում կատարվեց հոգեհանդիստ կոմս Լօրիս-Մէլիքովի յիշատակին, ներկայութեամբ իշխան կառավարչապետի և բարձր պաշտօնեաների։

—

Ստացանք հետևեալ արդարացի նկատողութիւնը Երևանից. ‹Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը ցանկանում է տօնել այդ դպրոցի յիսնամեակը, բայց զանազան պատճառներով այդ ցանկութիւնը մինչև այժմ չէ իրագործվում, և հէնց այդ պատճառով հոգաբարձութիւնը մինչև այժմ էլ լոյս չէ հանում դպրոցի յիսնամեակի ‹պատմութիւնը›, որը վաղուց տպած, պատրաստ է, և պինդ կերպով պահում է, այնպէս որ հասարակութիւնը չը տեսնելով յիսնամեակի տօնախմբութիւնը, միջոց էլ չունի կարդալու այդ յիսնամեակի ‹պատմութիւնը›։ Խորհուրդ ենք տալիս հոգաբարձութեանը լոյս հանել դպրոցի ‹պատմութիւնը› և նոյն իսկ վաճառահանել այդ գիրքը, փոխանակ դարսած պահելու։ Հաւատացնում ենք, որ յիսնամեակի փայլը չի պակսի, եթէ այդ դրքերը աւելի վաղ կը տարածվեն հասարակութեան մէջ և ոչ թէ նոյն իսկ տօնախմբութեան օրը։›

—

Վաղը, կիրակի օր, դեկտեմբերի 18-ին, կալուածական բանկի թատրոնում վրաց դերասանական խումբը պիտի ներկայացնի Սունդուկեանցի ‹Խաթաբալա› պիէսան։

—

Պետական կալուածների մինիստրութիւնը վճռել է կազմել մի առանձին դրամագլուխ՝ Թերեքի շրջանի գինեգործութիւնը զարգացնելու համար։

—

Գանձակի երկսեռ դպրոցների աւագ-ուսուցիչ պ. Ն. Դաւթեան ուղարկել է մեզ հետևեալ հերքումը. ‹Մշակի› № 140-ում այստեղից հաղորդած լուրը ջանում է նախ՝ չօշափել երկսեռ դպրոցների վարժուհիների պատիւը, առարկելով թէ. ‹չեն վստահանում բեմ դուրս գալ›, երկրորդ՝ մի քանի ուսուցիչների վարմունքը պախարակել՝ հաւատացնելով թէ ‹ծեծում, չոքեցնում, խիստ պատժում են մանուկներին, և այդ բոլորի վրա ուշադրութիւն չէ դարձնվում։› Հարկաւոր ենք համարում յայտնել, որ պ. լրատուի հաղորդածը միանգամայն սխալ է։ Մեր դպրոցների ուսուցչական խումբը երբէք դիտաւորութիւն չէ ունեցել ‹անպատճառ դեկտեմբերի 22-ին› ներկայացում տալ. ներկայացումը տալու դիտաւորութիւն եղել է և կայ. այդ դիտաւորութիւնը կիրականանայ, երբ մեզ յայտնի ուսումնարանական անյարմարութիւնը վերացած կը լինի։ Իսկ ինչ վերաբերում է վարժուհիների մասնակցութեանը, այսքան պիտի ասել, որ այն վարժուհիները, որոնք ընդունակ են մասնակցելու, ոչ թէ միայն պատրաստականութիւն են յայտնում յարմար դերերում բեմ դուրս գալու, ոչ թէ միայն արհամարհում են հասարակական նախապաշարմունքը, այլ մի քանի տարի առաջ են անտարբեր դանվել դէպի հասարակական զայրոյթը՝ մասնակցելով մի քանի անգամ ներկայացումներին, զանազան դաւառական քաղաքներում։ Գալով երկսեռ դպրոցներում տեղի ունեցող ‹խիստ պատիժներին› հաստատօրէն կասենք, որ այդ սուտ է։ Տարվայ սկզբին, ճշմարիտ է, չոքեցնելու մի բացառիկ դէպք տեղի ունեցաւ, որին անմիջապէս հետևեց հարկաւոր տնօրինութիւն՝ և այնուհետև իսկապէս տեղի չէ ունեցել ոչ մի այդպիսի անախորժ վարմունք։›

—

Մեզ գրում են ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, որ այնտեղի հայերը պատրաստել են Սունդուկեանցի 25-ամեակի առիթով մի բաւական ճաշակով ուղերձ՝ նրան ուղարկելու համար։

—

Նկարիչ Այվազովսկիին, ինչպէս հեռագրում են Կ. Պոլսից ‹Моск. Вѣд.› լրագրին, թիւրքաց Սուլթանը շնորհել է Մեճիդիէի մեծ շքանշանը։

—

Երէկ, դեկտեմբերի 16-ին, Պետերբուրգում պէտք է տրվէր հայ-ուսանողական սովորական ներկայացումը։ Ի միջի այլոց, ինչպէս գրում են Պետերբուրգի լրագիրները, պէտք է խաղացվէր ‹Պեպո› ի պատիւ Սունդուկեանցի 25-ամեակի, և երիտասարդ երգիչ Շահլամեանի ղեկավարութեամբ կազմված խումբը պէտք է երգէր ազգային երգեր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Արտասահմանի հայոց լրագիրներին Կ. Պոլսից գրում են հետևեալ տեղեկութիւնները։ ‹Բաւական ժամանակէ ի վեր խօսակցութեան նիւթ եղած է հայ կնոջ մը իսլամական կրօնը ընդունելը։ Այն տեղ տանց՝ սրճարաններու և շոգենաւուց մէջ կը խօսին կը վիճին սոյն խնդրոյ վերայ։ Մահմետականութիւն ընդունողն է հայ կին մը՝ քոյր ծանօթ տպարանապետ Պ. Ա. Ա.-ի։ Տիկին Մ. իր գործերովը կը յաճախէ Հայոց ու Ցունաց տուներն և Տաճկաց խօնախները։ Աստի 10-15 օր առաջ առաւօտուն կանուխ ամուսինը շուկայ երթալէ զինի երեք փոքրիկ զաւակները կառնէ և կերթայ իր ամենէն շատ յաճախած թուրք խօնախներէն մին, պալատան պալթաճիի մը ապարանքն ի Պէշիքթաշ և հոն կանցնէ գիշերը։ Երեկոյին ամուսինը երբ տուն կը վերադառնայ, մեծ կըլլայ իր զարմանքն ու զայրոյթ, ոչ զոք գտնելով հոն. հետևեալ առաւօտուն իմանալով իր կնոջ գտնուած տեղը կերթայ և երբ զիւր լծակիցն կը տեսնէ եաշմախով ու ֆէրաճէով, կայծակնահար կըլլայ այրը։ Տիկին Մ. առանց բնաւ այլայլելու ամենայն պաղարիւնով կըսէ իր ամուսնոյն թէ երազին մէջ մարգարէն գալով բացատրած է իրեն սուրբ կրօնի վարդապետութիւնը, թէ անկարելի է առանց մահմէտական ըլլալու երկնից արքայութիւնը վայելել և թէ ինքը արաբ ուղտապանին յառաջ բերած զօրաւոր փաստերէն համոզուելով իսլամութիւնը ընդուներ է իր զաւակներով միասին։ Խեղճ ամուսինը որ Կեսարացի մի վաճառական է, չուարած՝ տեսնելով որ իր կինը անդրդուելի է իր համոզման մէջ, կերթայ գտնել տաներէց քահանայն և եղելութիւնը անոր պատմելով վերստին կուգայ խօսնախ ընկերակցութեամբ քահանային։ Սակայն դարձեալ հակառակ.... աղայի, իր օրինաւոր ամուսնոյն աղաչանաց, հակառակ քահանայի հաղար ու մէկ խրատուց, տիկին Մ. անտարբեր կըսէ թէ՝ իսլամական կրօնը ընդունած է վերջնականապէս և իր ամուսինը այն ժամանակ միայն իբրև իր օրինաւոր այրը կընդունի երբ սա թրքանայ։ Խեղճ ամուսինը այլ ևս բոլորովին յուսահատ իր կնոջմէն, կուգէ իր զաւակներն որքա անչափահաս գոլով ըստ օրէնի իրենց հօր կը պատկանին. բայց ոչ ոք իրենց մտիկ կընէ և դժբաղդ.... աղայն ու քահանայն ճամբայ կը ընեն։ Կեսարացին Ազգային Պատրիարքարանի դիմելով կըսէ որ թէև իր պսակեալ կինը մահմետականութիւնը ընդունած է, սակայն ինքն իբրև հայր իր զաւակաց տէրն ըլլալով պարտաւոր է զանոնք, մինչև որ խելահասին, իրենց նախնի կրօնին ու ազգութեան մէջ պահել։ Զեմք գիտեր թէ ազգային իշխանութիւնը ինչ ըրած է այս նկատմամբ. միայն սաչափ գիտեմք որ տակաւին խեղճ տղայք կան ու կը մնան իրենց ազգուրաց մօր քով և թէ այսօր կամ վաղը պիտի մահմետականութիւն ընդունին։›

‹Կեսարիայէն եկած նամակներ ու ճամբորդք մեծ գովեստիւ կը խօսին վիճակին Առաջնորդ Պալեան վարդապետի նկատմամբ։ Ցայտնի է թէ ինչպիսի անկերպարան վիճակի մը մէջ կը գտնուէին դաւառին ազգային գործերը երբ նա ընտրուեցաւ յաթոռ առաջնորդական Կապադովկիոյ վիճակին։ Այսօր շնորհիւ այժմեան Առաջնորդ Հօր, ազգային գործերը քիչ շատ բարւոքման ճամբուն մէջ մտած են. կրօնափոխութիւնք գրեթէ բոլորովին դադրած, տեղական իշխանութեանց հետ յարաբերութիւնք բարւոք և այլն և այլն։ Նորին Սրբութեան ամենէն աւելի մտածման առարկայք են վարժարանները. արդէն շընորհիւ անկեղծ ընաւորութեան յաջողած է Պոլսոյ մէջ Կեսարացի ազգայիններէ զօրաւոր ընկերութիւն մը կազմել Ս. Կարապետի վանուց մէջ գիշերօթիկ վարժարան մը պահելու համար. բաւական կը ստանայ։ Ամենքին յայտնի է, որ այսօր մեր ամբողջ գրականութիւնը համարեա մամուլի մէջն է ամփոփվում։ Մամուլից դուրս մենք համարեա ոչինչ չունենք։ Պարբերական հրատարակութիւններից դուրս ամբողջ տարվայ ընթացքում լոյս չեն տեսնում գիտութեան, կամ գեղարուեստի որ և է ճիւղին պատկանող յարդելի աշխատութիւններ։ Եւ այդ հասկանալի է, քանի որ մեր բոլոր գրողները իրանց աշխատութիւնները լոյս են ընծայում պարբերական հրատարակութիւնների միջոցով. այդ պարբերական հրատարակութիւնների մէջ են գործում այժմ մեր թէ հին և թէ նոր գրողները, և դրանից դուրս մեզանում համարեա մտաւոր կեանք չը կայ։ Այդ գուցէ ուրախալի չէ, բայց այդ այդպէս է....

Եւ այդ պատճառով, ես սխալ չը գործեցի, երբ մի փոքր վերև ասեցի, որ եթէ մեր մամուլի դրութիւնը մի՛ փոքր բարեփոխվի, գրական աշխատանքի վարձատրութեան հարցը լուծում կը ստանայ։

Սակայն մեր պարբերական հրատարակութիւնները չեն կարողանում վարձատրել իրանց աշխատաւորներին։ Այս բոլէիս ամբողջ աշխարհում մենք չունենք մի լրագիր, կամ ամսագիր, որ կարողանար վարձ տալ իր բոլոր գրողներին, որ կարողանար նիւթապէս վարձատրել նրանց աշխատանքը։ Նոյն իսկ հայերիս մէջ ապահոված լրագիրը՝ ‹Մշակը› հազիւ կարողանում է վարձատրել իր աշխատակիցներից մի քանիսին միայն,—և շատերը իրանց գլաւոր աշխատանքի համար վարձատրութիւն չեն ստանում և գրում են միայն իրանց բարի կամքով, և դէպի գործը կամ լրագիրը ունեցած սիրուց և համակրութիւնից։

Բայց ասեցէք խնդրեմ, ինչու մի լրագիր, որ գոյութիւն ունի ամբողջ 16 տարի, որ կարողացել է այսպէս թէ այնպէս այնքան մեծ ազդեցութիւն ունենալ, և որը իր մէջ է ամփոփած եղել հայոց համարեա բոլոր մտաւոր ոյժերի ստեղծագործութիւնները, չը պէտք է կարողանայ վարձատրել իր բոլոր աշխատակիցներին. և ինչու չը պէտք է կարողանայ վճարելով ունենալ սեփական թղթակիցներ կարևոր կենտրոններում, և ամեն տեսակ մասնագէտ աշխատակիցներ, բժիշկներ, տնտեսագէտներ, իրաւաբաններ, մանկավարժներ և այլն և այլն, որոնք լրագրի համար աշխատէին և լրագրով էլ ապրէին....

Եւ կարծում է հասարակութիւնը թէ դրա համար միլիոններ են հարկաւոր.... Ոչ։—Եթէ ‹Մշակը› ունենայ 2,000-ից մինչև 3,000 բաժանորդ, ասում են միշտ այդ լրագրի դրամական գործերի ղեկավարները, այն ժամանակ կարելի կը լինի ոչ թէ միայն լրագիրը հրատարակել նոյն իսկ շաբաթը 7 անգամ, այլ և կարելի կը լինի վարձատրել բոլոր գրողներին, վճարելով այն բոլոր աշխատութիւնների համար, որոնք լոյս են տեսնում լրագրի էջերում։ Եւ այդպիսով լրագիրը իր բիւդժէտից 5—7 հազար բուբլի գրողներին փող տալով, կարող կը լինի գրողների մի խումբ ապահովել, և միջոց տալ նրանց իրանց ոյժը բացառապէս գրական մաւոր աշխատութիւններին նուիրելու....

Կարծում եմ, որ այդպիսի մի հաշիւ ոչ ոք անիրագործելի չի համարի, որովհետև անիրագործելի բան չէ կարող համարվել այն, որ ‹Մշակի› նման լրագիրը կարող է և պէտք է ունենայ 2,000-ից մինչև 3,000 բաժանորդ բոլոր հայերի մէջ....

Այդ կէտին հասնելու համար հարկաւոր է գըլխաւորապէս իրան հայ հասարակութեան ‹գիտակցական› ցանկութիւնը, և եթէ հասարակութեան կողմից կարտայայտվի այդ տեսակ մի գիտակցական ցանկութիւն, այն ժամանակ, անկասկած, փոքր ինչ կը փոխվի հայոց մամուլի, հայոց լրագրութեան և օրագրութեան դրութիւնը, և դրանով էլ կը փոխվեն գրականութեան մշակների նիւթական հանգամանքները և գրական աշխատանքի վարձատրութեան հարցը։

Դրա մասին ինքն հասարակութիւնն էլ պէտք է մտածի։

Դա օրվայ խնդիր է։

Լուծել այդ խնդիրը պէտք է ոչ թէ միայն գրական աշխատանքի վարձատրութեան սկզբունքի տեսակէտից, այլ նոյն իսկ ազգի պատւի, և ժողովրդի զարգացման գործի օգտի տեսակէտից....

Մալան

ցի թոչակաւոր ուսանողներէ սոյն դպրոցն պիտի ունենայ 40 հատ ձրի դիշերօթիկ աշակերտներ Կեսարիոյ վիճակէն։ Պոլսեբնակ Կեսարացիք սոյն վարժարանին բացման համար մեծ ջանք կը ցուցնեն. արդէն Ց. էֆէնդի Էսատեան 200 ոսկւոյ (իբր 4,500 ֆր.) նպաստ մը խոստացած է։

‹Տարեգլխէն սկսեալ Կ. Պոլսում հայերէն լեզուաւ նոր թերթ մը պիտի հրատարակուի հանապազօրեայ, խմբագրութեամբ պ.պ. Սուրէնեանի, Պէրպէրեանի և աջակցութեամբ Ստեփան փաշայի, Մամուրեանի, Ար. Լուսինեանի և այլոց։ Ժողովրդային լրագրոյ մը պակասը զգալի էր մայրաքաղաքիս մէջ։ Մաղթենք որ սոյն թերթն այդ պակասը լեցուցէր, ինչպէս որ կը խոստանան իրենք։›

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սերբիայի ներքին քաղաքական գործերը օրից օր խճճվում են. ‹Neues Wiener Tageblat› լրագիրը խօսելով Սերբիայի մասին, ասում է, որ այդ թագաւորութիւնը այժմ նման է վառօդով լի մի տակառի,—և մի փոքրիկ կայծ է միայն հարկաւոր, որպէս զի սոսկալի պայթիւն առաջ գայ։

—Փարիզից հեռագրում են, որ մինիստրական ճգնաժամի մասին տարածված լուրերը զուրկ են որ և է հիմքից։

—Օրլէանեան պրինցները, ինչպէս գրում են Փարիզի լրագիրները, մտադրութիւն ունեն իբրև թէ Բոշիլդի աջակցութեամբ կազմակերպել մի նոր ընկերութիւն Պանամայի ջրանցքը աւարտելու համար։

—Կրիտէ կղզու վրա ապստամբական շարժումներ են առաջացել. ազգաբնակութիւնը հեռագիր է ուղարկել Թիւրքաց սուլթանին, առաջարկելով յետ կանչել տեղական նահանգապետին։ Ենթադրում են, որ այդ շարժումների մէջ խառն է անգլիական կառավարութեան մատը։

—Փարիզից գրում են, որ գեներալ Բուլանժէի կողմնակիցների մի մասը վերջին ժամանակը հեռացել է նրանից. այդպէս, օրինակ, պահպանողականները սառեցին նրանից, երբ նա յայտնեց թէ ինքն հանրապետական է, իսկ կաթոլիկ կուսակցութիւնը թշնամացաւ Բուլանժէի հետ՝ նրա կնոջ ապահարզանի հարցի առիթով։

—Իտալական ադատամիտ և արմատական կուսակցութիւնների ներկայացուցիչները յարձակվում են Կրիսպիի վրա, այն թշնամութեան համար, որ այժմ կայ Իտալիայի և Ֆրանսիայի մէջ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ ‹Гражданинъ› լրագիրը հաղորդում է իբրև լուր, որ Պրժէվալսկու դէպի Տիբէթ արած ճանապարհորդութիւնը չարունակելու համար՝ նշանակված է դիւաւոր շտաբի գնդապետ Պէվցով, և որ ճանապարհորդների խումբը կուղևորվի մարտի սկզբներին։ ‹Новое Время› հաղորդում է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը անհրաժեշտ է համարել յունվարի 1-ից նորից քանալ գիմնազիաների, պրոգիմնազիաների և բէալական դպրոցների պատրաստական դասարանները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի։ Պետերբուրգի կրէդիտական ընկերութեան կեղծ օրլիգացիաների Մոսկվայում տարածելու մասին լրագիրները հաղորդում են որ և Պետերբուրգում մի քանի դէպք է եղել այդ կեղծ օրլիգացիաների տարածման։ Օրլիգացիաները կեղծելու և տարածելու գործով զբաղված է մի ամբողջ խումբ, որը ըստ երևոյթին իր գործունէութիւնը ընդարձակել է և գաւառական քաղաքների վրա։ Օրլիգացիաները ճարպիկ կերպով են կեղծված։

ԹԷՀԵՐԱՆ, 16 դեկտեմբերի։ Պարսից կառավարութիւնը դիտաւորութիւն ունի ուղարկել պետութիւններին մի լրացուցիչ յայտագիր Կօրուն գետի վրա ազատ նաւադնացութեան մասին։ Այդ լրացուցիչ յայտագրով նաւադնացութեան ազատութիւնը նշանաւոր կերպով տեսմանափակված կը լինի։ Անգլիական շրջաններում ենթադրում են որ լրացուցիչ յայտագիրը ուղղված է Անգլիայի դէմ։ Ռուսաստանի կողմնակից Մուշիր-Էդ-Դովլայ, որը հրաժարեցրած էր արտաքին գործերի մինիստրի պաշտօնից Էիւբ-խանի փախուստից յետոյ, այժմ նշանակված է արդարադատութեան մինիստր։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԵԴՐԱԿ ԲՕՄԱՆՕՎԻՉ և ՎԱՐՎԱՐԱ ՍՕԼՕՄՕՆՕՎՆԱ ՇԱՀԴԻՆԱՐԵԱՆՆԵՐԸ, յայտնելով իրանց ծանօթներին և բարեկամներին, որ պէտք է կատարվի հանգուցեալ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲՕՄԱՆՕՎԻՉ ՇԱՀԴԻՆԱՐԵԱՆԻ ՏԱՐԵԼԻՑԸ, խնդրում են շնորհ բերել այդ տարելիցին. դեկտեմբերի 18-ին, կիրակի օր, Ս. Նշան եկեղեցին, առաւօտեան ժամը 10-ին։ 1—1

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦРУНИ.

ԹԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՏ

Դվօրցօվայա փողոց ՆԱԽԿԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քարավանսարայում

Ստացված են

ՊԱՏՐԱՍՏ ԲՐԵԶԷՆՏՆԵՐ ամեն տեսակ չափերի

1—10 (2) ԴՕՆՆԷՐ և ԼԷՑՏՏ

ԲՕԼՇԱՅԱ ՐԱՍՊՐՕԴԱԺԱ

ЦЕНТРАЛЬНЫЙ ГАЛАНТЕРЕЙНЫЙ МАГАЗИНЪ

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Միայն մինչև նոր տարի ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳԱԼԱՆՏԷՐԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ, Երևանեան հրապարակի վրա, Զուբալօվի տանը, քաղաքային Սկուէրի և ռուսաց Սէմինարիայի դիմաց։

Ամեն տեսակ գալանտէրէական և մոդային ապրանքներ, անային-տնտեսական առարկաներ, լամպաներ, լապտերներ, մելխիորից և բրոնզեայ իրեր, սամովարներ, սեղանի պարագաներ, ֆոտոգէնեան խոհանոցներ, բարակ ճերմակեղէն, ֆուֆայկաներ, գուլպաներ, աղուխներ, ծածկոցներ, սալֆէտներ, կօշիկներ, գլխարկներ, կօրսէտներ, գլխի աղուխներ, ժէրսէներ և այլն։ Մեծ ընտրութիւն մանկական խաղալիկների, տիկինների և ալբօմների։ 1—6

ОПТИЧЕСКОЕ ОТДѢЛЕНІЕ

въ магазинѣ часовъ

М. Г. ЦЕЙТЛИНА

противъ Дворцоваго сада, угловой магазинъ.

ВСЕВОЗМОЖНЫЕ ОЧКИ, ПЕНСНЭ, ЛОРНЕТЫ и ТЕРМОМЕТРЫ.

отпускаются въ точности по рецептамъ г.г. врачей, по новой метрической и прежней дюймовой системѣ. Починки и вставки стеколъ.

ЦѢНЫ САМЫЯ УМѢРЕННЫЯ. 2—6 (2)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 23 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ CAMBODGE (ԿԱՄԲՕԶ) նաւապետ PAUL (ՊՕԼ), մտնելով Կ. Պոլիս, Պօրտ-Լահօր և Լակավալ։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։ 2—2

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆՏՐՕՆԱԿՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են Խրիմեան Հայրիկի գրքերը,

1. „Դրախտի ընտանիք“, գինը . . . . 1 ռուբլի — կ. ճանապարհածախս 25 կ.
2. „Սիրաք և Սամուէլ“, գինը. . . . . 1 „ — „ „ 25 „
3. „Մարգարիտ Աբքայութեան“, գինը. — „ 50 կ. „ 15 „
4. „Յիսուսի վերջին շաբաթը“, գինը. — „ 50 „ „ 15 „

2—3

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ց1-ն Դեկտեմբերի 1888

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բագուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ).....	98,755—21	42,108—95	140,864—16
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	1,096—46	190,000 —	191,096—46
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.....	2,668,973—45	930,493—49	3,599,466—94
4. Զեղչումն մուրհակաց մէկ ստորագրութեամբ, ապահոված ապրանքներով.....	— —	— —	— —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	35,533 —	10,237—50	45,770—50
6. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	844,625—34	242,060 —	1,086,685—34
բ) » ոչ ապահ. » »	135,219 —	9,845 —	145,064 —
գ) ապրանքների.....	— —	71,600 —	71,600 —
դ) Ոսկւոյ և արծաթի.....	— —	31,390 —	31,390 —
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	256,104—75	32,142—86	288,247—61
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր..	58,935—75	1,882—55	60,818—30
9. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro).....	5,349,317—28	— —	5,349,317—28
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	8,806,960—93	— —	8,806,960—93
10. Բաժնի հաշիւը կենտրօն. վարչութեան հետ.	827,687—55	— —	827,687—55
Կենտրօն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	— —	24,861—43	24,861—43
11. Բողոքուած մուրհակներ.....	— —	— —	— —
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւններ.....	17,015 —	2,920 —	19,935 —
13. Ընթացիկ ծախսեր.....	40,148—69	13,197—11	53,345—80
14. Կահկարասիք և սկզբնական ծախսեր.....	3,461—51	3,009—77	6,471—28
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	13,455—73	780—84	14,236—57
Բ. Ա.	19,157,289—65	1,606,529—50	20,763,819—15

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ.....	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ.....	154,474—72	— —	154,474—72
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	1,735,152 —	114,839 —	1,849,991 —
բ) ց'Պահանջ.....	208,167 —	12,200 —	220,367 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	779,122—53	403,298—92	1,182,421—45
» » պայմանաւոր....	— —	108,062—60	108,062—60
4. Զեղչումն մուրհակաց պետական բանկայի Թիֆլիսի բաժնում.....	316,456—07	— —	316,456—07
5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի Թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.	447,900 —	— —	447,900 —
6. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro).....	5,076,325—77	— —	5,076,325—77
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	9,023,310—71	— —	9,023,310—71
7. Բաժնի հաշիւը կենտրօն. վարչութ. հետ..	— —	850,082—78	850,082—78
Կենտրօն. վարչութ. հաշիւը բաժնի հետ..	72,330—32	— —	72,330—32
8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 1882, 83, 84, 85, 86 և 87 թ.	1,654—71	— —	1,654—71
9. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց.....	69,214—65	16,954—58	86,169—23
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	201,009—95	93,005—62	294,015—57
11. Փոխանցիկ գումարներ.....	72,171—22	8,086 —	80,257—22
Բ. Ա.	19,157,289—65	1,606,529—50	20,763,819—15

Дозволено цензурою, Тифлисъ 16 Декабря 1888 г.

Типографія Канцеляріи Главноначал. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.